

## **Սևանի քաղաքապետ Ռուդիկ Ղուկասյանի ուղերձը Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու բացման և օծման արարողակարգի առթիվ**

Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ Սերժ Սարգսյան  
Պատվարժան վեհափառ Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին 2-րդ  
Հարգարժան հոգևոր այրեր  
հարգելի տիկնայք և պարոնայք, հրավիրյալներ  
սիրելի համաքաղաքացիներ

2015թ. մայիսի 31-ը Սևանի և սևանցիների համար մի այլ խորհուրդ ունի, որին սպասել էինք տասնամյակներ շարունակ, իսկ վերջին 7 տարում՝ նաև անհամբերությամբ և մեծ հավատով:

Ճակատագիրը մշտապես փորձության է ենթարկել հայ ժողովրդին: Այդ փորձությունը հաղթահարել ենք՝ սերը՝ մեր հոգում, հույսը՝ մեր մտքերում, հավատը՝ մեր հոգիներում: Այդ հավատն է, որը մեզ ուժ է տվել կառուցելու մեր հոգևոր տները:

Սևանցիների վաղեմի երազանքն էր՝ քաղաքում ունենալ հոգևոր տուն, որը իրողություն դարձավ 2007թ-ին՝ ֆրանսահայ բարերար Սարգիս Բեդոյանի մեկենասությամբ: Եկեղեցու կառուցման պատվիրատուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանն է: Ընտրվեց նաև այն տարածքը, որտեղ կառուցվելու էր եկեղեցին՝ լինելով իշխող բովանդակային առումով:

2009թ-ի աշնանը Գարեգին 2-րդ կաթողիկոսի ձեռամբ կատարվեց եկեղեցու հիմնարկօրհնների արարողությունը: Մարդիկ վստահ էին՝ ևս մեկ տարի, և Սևանը կունենա հոգևոր տուն, քաղաքի ճարտարապետական դիմագիծն էլ կլրացվի ևս մեկ կառույցով:

Սակայն հանգամանքների բերումով մի քանի տարով դադարեցվեցին շինարարական աշխատանքերը, որոնք վերսկսվեցին 2014թ-ի մայիսին: Մեկ տարի անց ուրախությամբ ու հպարտությամբ արձանագրում ենք՝ մեր քաղաքում այսօրվանից գործելու է Սրբոց Հրեշտակապետաց անունը կրող եկեղեցին:

Սևանցին երախտագիտությամբ, մեծագույն սիրով և անթաքույց հպարտությամբ է տալիս ֆրանսահայ բարերար Սարգիս Բեդոյանի անունը, ով իր պատմական հայրենիքի մի անկյունում աստվածահաճո ձեռնարկի իրականացնողը դարձավ ու քայլ առ քայլ այն վերածեց կոնկրետ գործի՝ այս հոյակերտ շինության տեսքով, որի ճարտարապետն ու հեղինակն է ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը:

Այս ձեռնարկի շուրջ համախմբվեցին մարդիկ՝ մեկն իր մտքերով ու գործուն աջակցությամբ, մյուսը՝ ֆիզիկապես ու նյութապես: Արդյունքում՝ վեր հաննեց Սրբոց Հրեշտակապետաց անունը կրող եկեղեցին, որը դառնալու է ոչ միայն Սևանի ճարտարապետական դիմագծի կարևորագույն մասը, այլ նաև վերապահված է ունենալու անփոխարինելի դեր հոգևոր դաստիարակության, արժեքների վերազնահատման ճանապարհին:

Սևանցիները կվկայեն՝ մեր քաղաքում հոգևոր տուն ունենալու պահանջը շատ էր զգացվում, ու ճանապարհները տանում էին այլ վայրեր ու համայնքներ: Այսօր փաստում ենք՝ բարերար Սարգիս Բեդոյանի շնորհիվ Սևանը ևս ունեցավ իր եկեղեցին, ու շատերն են գալու այստեղ՝ այս պատերի ներսում գտնելու իրենց հոգու խաղաղությունն ու հանգիստը: Այս եկեղեցում կատարվելու են կնունք ու պսակադրություն, մատուցվելու է պատարագ, վառվելու են հույսի ու հավատի մոմեր, և յուրաքանչյուրն ստանալու է Բարձրյալի հետ հաղորդակցվելու հնարավորություն:

Ուզում եմ կրկին շնորհակալություն հայտնել մեր լավագույն բարեկամին՝ Սարգիս Բեդոյանին և նրա ընտանիքին՝ աստվածահաճո այս ձեռնարկը հաջողությամբ պսակելու համար: Այս տարիների ընթացքում նա միշտ եղավ մեր կողքին թե իր ներդրումներով, թե ֆիզիկապես, չհոգնեց ու չտրտնջաց՝ անկախ հանգամանքներից ու դժվարություններից, ոգևորվեց անգամ փոքրիկ առաջխաղացմամբ, հեռավոր Փարիզից հետևեց աշխատանքներին ու հաճախ էլ ժամանեց, որպեսզի հենց տեղում իր աչքով տեսնի ու համոզվի՝ ամեն ինչ ընթանում է սպասվածի պես:

Պատեհ պահն է նաև շնորհակալություն հայտնելու շինարարական կազմակերպություններին, այսօր՝ ի դեմս «Լամբարյան» ՍՊ ընկերությանը, որոնք գաղափարը դարձրին կոնկրետ գործ, աշխատեցին՝ անտեսելով եղանակային ոչ բարվոք պայմանները, ու մեզ հանձնեցին այս մնայուն կառույցը՝ շրջապատված բարեկարգ ու խնամված տարածքով:

Պահն է նաև շնորհակալություն հայտնելու այն մարդկանց, որոնք թեև ֆիզիկապես գտնվում են Սևանից հեռու, սակայն իրենց պարտքը համարեցին այս պահին լինել Սևանի և սևանցու կողքին ու եկեղեցու կահավորման կարևորագույն ու պատասխանատու խնդիրը վերցրին իրենց վրա՝ ֆինանսական աջակցությամբ ամբողջացնելով եկեղեցու գործարկումը:

Արթուր Վարդանյանը, Աշոտ Պետրոսյանը, Բագրատ Սողոմոնյանը, Ստեփան Մելոյանը, Միեր Քոչարյանը, Սուրիկ Գևորգյանը հեռավոր ափերից ձեռք մեկնեցին ու նրանց միացան սևանաբնակները, ովքեր հանդես բերեցին պատրաստակամություն, չշրջանցեցին օգտակար լինելու իրենց չափաբաժինը:

Պատվաբաժան ներկաներ, հարգելի հրավիրյալներ,

Սիրելի հայրենակիցներ

Հայաստան աշխարհում ավելացավ ևս մեկ եկեղեցի, Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին 2-րդի ձեռամբ այսօր օծվեց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին, քիչ հետո կմատուցվի նաև պատարագ: Մեզ համար անչափ կարևոր է վեհափառի ներկայությունը մեր քաղաքում, սա ևս մեկ ազդակ է գնահատելու և կարևորելու եկեղեցու դերը և կրկին բարձրաձայնելու, որ եկեղեցին մեր հավաքական նկարագիրն է, մեր ինքնության մի մասը, և այսուհետ բոլորս պարտավոր ենք մեր կենդանի շնչով ու աղոթքներով լցնել այն, ջերմեռանդորեն աղոթել առ Աստված ու ուժ ստանալ Աստծուց:

Ճարտարապետական այս կառույցը կապրի ու կդառնա մեզանից յուրաքանչյուրի մի մասնիկը, կծառայի իր նպատակին միայն մեր հավատի, մեր ներկայության շնորհիվ:

Սրբոց Հրեշտակապետաց անունը կրող եկեղեցին դառնում է սևանցու և Սևան ոտք դնողի հավատի կենտրոնը, մեր հոգու լույսի և հոգևոր արժեքների տարածման սկիզբն ու ճանապարհը:

Կրկին շնորհավորում եմ բոլորիս, թող Տերը մեզ պահապան ու զորավիգ լինի մեր բոլոր գործերում, իսկ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին դառնա այն հոգևոր վայրը, որտեղ հաստիքի են հավատի և հույսի ուղիները:

Հարգարժան ներկաներ

Համայնքաշեն ու ազգանվեր այս գործի հեղինակը՝ Սարգիս Բեդոյանը, մեր քաղաքի և սևանցիների լավագույն բարեկամը, արժանի է մեծագույն գնահատանքի: Այսօր այդ գնահատականի վավերագիրը «Սևանի պատվավոր քաղաքացի» կոչումն է, որին նա արժանանում է բոլոր սևանցիների կողմից, որովհետև սևանցին երախտապարտ է այն մարդկանց, ովքեր կարողանում են ինչ-որ բանով օգտակար լինել, իսկ այս դեպքում օգտակարությունն անգնահատելի է և հարգանքի արժանի:

/ հավաստագրի հանձնում /

Եկեղեցու կառուցման մեկնարկը մեր քաղաքում տրվեց դեռևս 2007թ-ին: Սևանի նախկին քաղաքապետ Գևորգ Մալխասյանը կանգնեց այս կարևորագույն ձեռնարկի կողքին՝ կատարելով նախապատրաստական բոլոր աշխատանքները: Տարիներ անց փաստում ենք՝ ձեռնարկը պսակվել է հաջողությամբ, վկան՝ այս հոյակերտ եկեղեցին: Գնահատելով Սևանի նախկին քաղաքապետ Գևորգ Մալխասյանի ներդրումը՝ նրան շնորհվում է «Սևանի պատվավոր քաղաքացի» կոչումը:

/ հավաստագրի հանձնում /

Շնորհավորում ենք Սևանի պատվավոր քաղաքացի կոչմանն արժանացածներին, շնորհավորում ենք բոլորիս այս օրը տոն դարձնելու, Սևանի կենսագրության մեջ մեկ էջ էլ ավելացնելու, քաղաքի հոգևոր նկարագիրն ամբողջացնելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում այն բոլոր մարդկանց, ովքեր այս օր մեր կողքին են, մեզ հետ միասին նշում են եկեղեցի ունենալու և այն գործարկելու բերկրանքը և իրենց ներկայությամբ առավել հիշարժան ու պատասխանատու են դարձնում օրն ու պահը:

Աստված զորավիգ ու պահապան բոլորիս: